



ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՉԻՆԱՍՏԱՆՆ ՈՒ ԱՄՆ-Ը ԽՈՒՍԱՓԵԼ

«ՖՈՒԿԻԴԻԴԻ ԾՈՒՂԱԿԻՑ»


DOI: 10.52174/2579-2989_2021_1_90

Հիմնաբառեր. Չինաստան, ԱՄՆ, Pax Americana, Pax Sinica, աշխարհակարգ, աշխարհաքաղաքականություն, գերտերություն, սառը պայտերազմ, դիմակայություն, միջազգային անվտանգություն

Վարդան ԱՎՈՅԱՆ

Քաղաքական գիտությունների
դոկտոր, դոցենտ

2002 թ. ավարտել է ԵՊՄՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ), 2010 թ.՝ ԵՄ քաղաքական դասընթացների երեկանյան դպրոցը, 2015 թ.՝ ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը: 2004 թ.-ին ստացել է գիտությունների թեկնածուի, 2018 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2018 թ.-ից առայսօր ՀՊՏՀ «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի տնօրենի տեղակալ-ավագ փորձագետ է: 2012 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնում: Ամերիկյան քաղաքական գիտության ասոցիացիայի (ք. Վաշինգտոն) և Ռուսաստանի քաղաքական գիտության ասոցիացիայի (ք. Մոսկվա) անդամ է: Հեղինակ է 60-ից ավելի գիտական հրատարակումների:

 ORCID ID: <https://orcid.org/0000-0002-4974-0312>

Հոդվածը նվիրված է չին-ամերիկյան հարաբերություններում արձանագրվող վտանգավոր միտումների վերլուծությանը: Դիտարկվել է վերջին տասնամյակներում աշխարհաքաղաքական իրողությունների և այդ համատեքստում Չինաստանի գլոբալ դերակատարության փոփոխությունը: Անդրադարձ է կատարվել Չինաստանի առաջնորդների երկարաժամկետ ուղղվածության նպատակներին և դրանց իրագործման հավանականության վերաբերյալ ամերիկացի փորձագետների կանխատեսմանը: Քննարկվել են երկու գերտերությունների միջև աճող մրցակցության և դիմակայության պատճառներն ու հնարավոր հետևանքները: Իրականացված վերլուծության արդյունքում ներկայացվել են աշխարհաքաղաքական փոփոխությունների հնարավոր ուղղությունները և միջազգային անվտանգությանը սպառնացող զարգացումները:

Ներածություն

Նախորդ դարավերջին սառը պատերազմի ավարտն ազդարարեց աշխարհաքաղաքական նոր դարաշրջանի մեկնարկը: Երկրորդ աշխարհամարտի արդյունքներով ձևավորված երկբևեռ աշխարհակարգի կազմաքանդմամբ սկիզբ դրվեց միաբևեռ աշխարհակարգի՝ ԱՄՆ-ի միանձնյա գերիշխանությամբ: Աշխարհը զրկվեց փոխզսպող և հավասարակշռող երկբևեռ համակարգից, որը, ըստ նորոգելիքի տեսաբանների, համարվում է ամենակայունը: Հետագա գործընթացները հաստատեցին վերջիններիս ճշմարտացիությունը տվյալ հարցում: Pax Americana-ի գերակայությունը և միաբևեռ աշխարհակարգի կայացումն ուղեկցվում էին միջազգային տուրբուլենտությամբ, տարաբնույթ ճգնաժամերով և ար-

յունալի հակամարտություններով: Այնուամենայնիվ, XXI դարի սկզբին ի հայտ եկան աշխարհաքաղաքական նոր իրողություններ, որոնց շարքում առանցքայիններից են Չինաստանի աննախադեպ տնտեսական վերելքն ու վերջինիս աշխարհաքաղաքական ազդեցության մեծացումը: Այս երևույթը, որին հավելվում էր Ռուսաստանի ռազմավարական դիրքերի ամրապնդումը և որոշ տարածաշրջանային տերությունների մեծացող հավակնությունները, սասանում էին միաբևեռ աշխարհակարգի հիմքերը՝ վերջինիս օժտելով բազմաբևեռության հատկանիշներով:

XXI դարի երրորդ տասնամյակի մեկնարկին ԱՄՆ-ը թեև դեռ շարունակում է համարվել աշխարհի հզորագույն երկիրը, սակայն արդեն իսկ հեռու է իր նախկին դերակատարումից և կարող է դիտարկվել որպես հավասարների մեջ առաջինը: Ակնհայտ է նաև, որ վերածնվող աշխարհակարգում սրընթաց փոփոխվում է ներկայիս ուժերի հավասարակշռությունը՝ հաճախ հոգուտ Չինաստանի, ինչը ԱՄՆ-ի քաղաքական վերանախավում խոր անհանգրստություններ է առաջացնում և դրդում դիմելու ռազմավարական զսպման գործիքակազմի մշակմանն ու կիրառմանը: Աշխարհը մտնում է աշխարհաքաղաքական հսկաների դիմակայությանը ուղեկցվող վտանգավոր շրջափուլ, որտեղ կողմերը կարող են հատել անվերադարձելիության կետը՝ սադրելով Մեծ պատերազմ:

Չինաստանի վերելքը

2021 թվականին լրանում է Չինաստանի կոմունիստական կուսակցության (ՉԿԿ) հիմնադրման 100-ամյակը: 1949 թվականին իշխանության գալուց հետո՝ ՉԿԿ կառավարման ավելի քան յոթ տասնամյակի ընթացքում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ) բազմաթիվ ոլորտներում արձանագրել է աննախադեպ հաջողություններ, որոնց շնորհիվ գերազանցապես աղքատ բնակչությանը և թույլ զարգացած ագրարային երկիրը ներկայում վերափոխվել է գերտերության՝ իր արժանի տեղը զբաղեցնելով աշխարհի առաջատար ուժային կենտրոնների շարքում: Այս առումով, պատահական չեն նաև

վերջին տարիներին քաղաքական և ակադեմիական շրջանակներում «չինական հրաշքի» ու Չինաստանի ապագայի շուրջ ընթացող ակտիվ քննարկումները, որոնք փորձում են պատասխանել այն հարցին, թե արդյոք համաշխարհային պատմության ամերիկյան՝ *Pax Americana* փակվող էջը փոխարինվում է չինական՝ *Pax Sinica* դարաշրջանով:

Անդրադառնալով ՉԿԿ կայացման պատմությանը՝ նշենք, որ 1921 թվականին Շանհայում կայացած առաջին համագումարից ի վեր վերջինիս անդամների թիվը մշտապես և կայուն կերպով ավելացել է՝ մի քանի տասնյակից հասնելով շուրջ 92 միլիոնի: Հատկանշական է, որ այդ ցուցանիշով ՉԿԿ-ն աշխարհում ամենաշատ անդամ ունեցող քաղաքական կուսակցությունն է, որը Չինաստանի ժողովրդին, որպես ներդաշնակ զարգացման ուղի, առաջարկել է սոցիալիզմի գաղափարախոսությունը: Ժամանակը ցույց տվեց, որ Չինաստանին հաջողվեց ոչ միայն ապահովել երկրի տնտեսական զարգացումը, այլև դա ներդաշնակորեն փոխկապակցել ժողովրդի բարեկեցության աճին: Պատահական չէ, որ Դեն Սյաոպինի ժամանակներից սկիզբ առած բարեփոխումների և բաց դռների քաղաքականության, այդ թվում՝ «Չորս արդիականացումների ծրագրի» (արդյունաբերության, գյուղատնտեսության, ազգային պաշտպանության և գիտության արդիականացում) շնորհիվ՝ հաջողվել է աղքատությունից դուրս բերել ավելի քան 700 մլն մարդու: Արդյունքում՝ ՉԿԿ 100-ամյա հոբելյանական տարում, Չինաստանը մըտնում է զարգացման որակապես այլ փուլ, որն աշխարհաքաղաքական նոր դերակատարություն է խոստանում «Արևելքի վիշապին»:

Հարկ է նշել, որ հոբելյանական տարին ՉԺՀ-ն դիմավորում է դեռևս տարիներ առաջ նախանշված նպատակների իրականացմամբ: Այսպես՝ 2012 թվականին՝ ՉԿԿ 100-ամյակին (2021 թ.) և ՉԺՀ-ի հիմնադրման 100-ամյակին (2049 թ.) ընդառաջ, ՉԿԿ XVIII համագումարը սահմանեց երկու հարյուրամյակի նպատակներն ու անհրաժեշտ բարեփոխումների ծրագիրը: Մասնավորապես՝ խնդիր դրվեց մին-

չև 2021 թվականն ամբողջապես անցում կատարել միջին բարեկեցության հասարակությանը, 2010 թվականի համեմատ՝ կրկնապատկել ՀՆԱ-ն և քաղաքային ու գյուղական բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտները, իսկ մինչև 2049 թվականը՝ կառուցել հարուստ, ուժեղ, ժողովրդավարական, քաղաքակիրթ և ներդաշնակորեն զարգացող սոցիալիստական պետություն: Նախատեսվում էր, որ տնտեսական զարգացումը ձեռք կբերի նոր որակ, որը, առաջին հերթին, ուղղված կլինի մարդու պահանջմունքների բավարարմանը:

Հատկանշական է, որ թեև միջին բարեկեցության հասարակության («Սյաոկան հանրություն», չին.՝ 小康社会) կառուցման ռազմավարական նպատակը նախանըշված էր դեռևս XVIII համագումարից շատ առաջ, սակայն հենց այդ ժամանակ հստակեցվեց բարեփոխումների «ճանապարհային քարտեզը»: Հավելենք, որ կոնֆուցիոսականության բարոյափիլիսոփայական ուսմունքից սկիզբ առնող «Սյաոկան հանրությունը» ենթադրում է նվազագույն բարեկեցության երաշխիքներ՝ ըստ հետևյալ մոտեցման. երեք բացասական երևույթների՝ սովի, աղքատության և գործազրկության ամբողջական հաղթահարում:

XVIII համագումարից հետո անցած ոչ ամբողջական տասնամյակի ընթացքում Չինաստանը, որոշ գնահատականներով, արդեն իսկ դարձել է աշխարհի ամենամեծ տնտեսությունը: Երկրի ՀՆԱ-ն հասել է 15 տրիլիոն ԱՄՆ դոլարի ցուցանիշին, և կարող ենք ասել, որ նախանշված՝ ՀՆԱ կրկնապատկման նպատակը գրեթե լիովին իրագործվել է: Արձանագրվող միտումների պահպանման պարագայում արդեն առաջիկա 10-15 տարվա ընթացքում Չինաստանը բոլոր չափանիշներով կամրագրի համաշխարհային առաջատարի իր դիրքը:

2012 թվականին Սի Ծինփինի առաջնորդությամբ երկրի ղեկավարումը ստանձնած նոր թիմն իր առջև դրել է ոչ միայն կարճաժամկետ, այլև երկարաժամկետ զարգացման ռազմավարական խնդիրներ: Միա-

ժամանակ, նախագահ Սին ներկայացրել է «Չինական երազանքի» տեսլականը՝ ըստ որի նախատեսվում է համաժողովրդական վերածնունդ: «Վերածննդի ուղին» ցուցահանդես այցելության ժամանակ (2012 թվական) ունեցած իր ելույթում ՉԺՀ նախագահը նշել է. «Հաստատապես համոզված եմ, որ ՉԿԿ հարյուրամյա հոբելյանին պարտադիր կերպով կլուծվի միջին բարեկեցության հասարակության ամբողջական կառուցման խնդիրը, իսկ Նոր Չինաստանի հարյուրամյակին, անկասկած, կիրագործվի հարուստ և հզոր, ժողովրդավարական և քաղաքակիրթ, ներդաշնակ և արդիականացված սոցիալիստական պետություն ստեղծելու նպատակը: Չինացի ազգի մեծ վերածննդի երազանքն անպայմանորեն կիրականանա»¹: Բացի այդ, XVIII համագումարը փաստացիորեն մեկնարկ տվեց «Մեկ գուտի, մեկ ճանապարհ» ռազմավարական գլոբալ նախագծին, որը բացի տրնտեսական և ենթակառուցվածքային ծրագրերի իրականացումից, մեծապես նպաստելու է տարբեր մայրցամաքների և երկրների միջև քաղաքակրթական և մշակութային երկխոսությանը:

Այնուամենայնիվ, Չինաստանի մեծագույն ձեռքբերումը ծայրահեղ աղքատության վերացումն է երկրում: Չինաստանին հաջողվել է ձևավորել սոցիալիստական համակարգի հաջողված մոդել, որը ներդաշնակում է տնտեսական զարգացումն ու ժողովրդի բարեկեցության մակարդակի բարձրացումը: Հարկ է նաև ընդգծել, որ COVID-19 համավարակը դարձավ վերջին տարիների բարեփոխումների և հարյուրամյակների համար նախանշված նպատակների իրականացման ամենամեծ խոչընդոտն ու փորձությունը: Թեև Չինաստանին համեմատաբար արագ կերպով հաջողվեց կայունացնել համավարակով պայմանավորված իրավիճակը և «վերաբացել» տնտեսությունը, սակայն lockdown-ի հետևանքները դեռ երկար ժամանակ զգացվելու են: Համավարակը հզոր հարված հասցրեց երկրի ՀՆԱ-ին՝ էապես արգելակելով տնտեսության 40-ամյա կայուն աճը: Համաշխարհային բանկի (ՀԲ)

¹ Си, Цзиньпин. (2014). *О государственном управлении*. Изд-во литературы на иностранных языках, Пекин, с. 49.

կողմից 2021 թվականի հունվարին հրապարակված զեկույցի համաձայն՝ 2020 թվականին Չինաստանի աճը դանդաղել է մինչև 2%, ինչը թեև 1976 թվականից հետո ամենացածր տեմպն է, սակայն կանխատեսվածից ավելի է՝ պայմանավորված համավարակի արդյունավետ հսկողությամբ և պետական ներդրումների միջոցով տնտեսության խթանման քաղաքականությամբ: Վերականգնումը թեև կայուն է, սակայն անհավասարաչափ. սպառողական ծառայությունները հետ են մնում արդյունաբերական արտադրանքից: Ըստ ՀԲ գնահատականի՝ նախորդ տարի ներմուծման աճը հիմնականում զիջել է արտահանման աճին, ինչը նպաստել է դրական առևտրային հաշվեկշռի աճին: 2021 թվականին տնտեսությունը կաճի մինչև 7.9%, ինչը նախկինում կանխատեսվածից ավելի է²:

Չինաստանի ժողովրդական համալսարանի Զարգացման և ռազմավարության ազգային ակադեմիայի գիտաշխատող Վան Իվեյը նշում է. «Համավարակը թեպետ ժամանակավորապես ազդել է Չինաստանի տնտեսության և հասարակության վրա, սակայն, միաժամանակ, խթանել է առողջապահության, կրթության, գրասենյակային աշխատանքի, տեղեկատվության տարածման, ֆինանսական գործարքների, լոգիստիկայի և գվարճանքի ոլորտներում թվային վերափոխումների գործընթացը: Նոր տեխնոլոգիաները հաստատուն կերպով մտնում են առօրյա, նպաստում պետական կառավարման ոլորտի արդիականացմանը, թվայնացմանն ու արհեստական բանականության առաջնորդանք: Համավարակը ոչ միայն դեպի տեղեկատվայնացում մղեց ՉԺՀ վերամշակող արդյունաբերությունը, այլև արագացրեց արհեստական բանականության, բանացանցի (Internet of Things, IoT), 5G տեխնոլոգիաների, կենսաբժշկության ներդրմանն ու կիրառման գործընթացները: Այն բարձրացրեց Չինաստանի դիրքը գնագոյաց-

ման համաշխարհային շղթաներում՝ այդ բնագավառում օժտելով նրան ավելի ծանրակշիռ ձայնի իրավունքով»³:

Մեծացող հավակնություններն ու աշխարհաքաղաքական դիմակայության ուժգնացումը

Վերջին տասնամյակների տնտեսական հզորության աճին զուգահեռ, առավել հավակնոտ են դառնում Չինաստանի արտաքին քաղաքական և աշխարհաքաղաքական նպատակները: Նախագահ Սի Ծինփինի ղեկավարությամբ՝ երկիրն ավելի բացահայտ և համառ կերպով է առաջնորդության ձգտում ՄԱԿ-ի տարբեր ինստիտուտներում, «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» համաշխարհային նախագծում, Հարավչինական ծովում սկսել է արհեստական կղզիների կառուցումը, արտաքին քաղաքականության մեջ էականորեն ավելացրել է փափուկ ուժի գործիքակազմի կիրառումը, նոր որակ է հաղորդել ռազմական ոլորտի բարեփոխումներին և այլն: Նման մոտեցումները, կարելի է ասել, որոշակիորեն հակասում են Չինաստանի մեծ բարեփոխումների հոգևոր հայր Դեն Սյաոպինի՝ «Պահպանել ուժերը, սպասել բարենպաստ պահի» պատգամին: Սակայն, չպետք է մոռանալ, որ Դենի պատգամը հնչել է այն ժամանակ, երբ ՉԺՀ տնտեսությունը կազմում էր համաշխարհային ՀՆԱ ընդամենը 1%-ը, որն այսօր արդեն հասել է 15%-ի:

Սինգապուրի վարչապետ Լի Սյան Լուև «Foreign Affairs» ամսագրում հրապարակած (2020 թվական) հոդվածում դիպուկ կերպով նկատում է, որ Չինաստանի ներկայիս առաջնորդներն արդեն չեն հենվում Դեն Սյաոպինի՝ ուժերի քողարկման և հարմար ժամին սպասելու սկզբունքի վրա: Նրա խոսքով՝ Չինաստանն իրեն դիտարկում է որպես ցամաքային տերություն, սակայն հավակնում է դառնալ նաև ծովային տերություն՝ արդիականացնելով բանակն ու նավատորմը, ձգտելով զինված ուժերը վերածելու համաշխարհային կարգի մար-

² World Bank. 2021. *Global Economic Prospects, January 2021*. Washington, DC: World Bank, P. 20. doi: 10.1596/978-1-4648-1612-3.

³ Ван, Ивэй. (2020). Выход из кризиса и преимущества Китая. *Россия в глобальной политике*, N 3 (Май/Июнь), дата обращения: 22/01/2021, <https://globalaffairs.ru/articles/vyhod-iz-krizisa-i-preimushhestva-kitaya/>

տական միավորման⁴:

Դժվար է չհամաձայնել Սինգապուրի վարչապետի վերոնշյալ դիտարկմանը: ՉԺՀ-ն սկսել է ռազմական բազաներ կառուցել արտերկրում: Դեռևս 2017 թվականին առաջին ռազմածովային բազան բացվեց Զիբուտիում, որի հիմնական նպատակը ծովահենության դեմ պայքարն է: Աշխարհաքաղաքական հավակնություններին զուգահեռ, Չինաստանն ընդլայնում է նաև իր շահերի ոլորտը տարբեր տարածաշրջաններում՝ Հեռավոր Արևելքից մինչև Աֆրիկա և Լատինական Ամերիկա: Այսպես՝ Պարսից ծոցում սկզբնապես կենտրոնացած լինելով ածխաջրածինների առևտրի վրա, ներկայում հետաքրքրված է նաև էներգետիկայի, արդյունաբերության, տրանսպորտի, կապի և այլ ոլորտներով: Միաժամանակ, նկատելի է Չինաստանի գործունեության ընդլայնումը ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելություններում: 2018-2019 թվականներին ՉԺՀ-ն Մերձավոր Արևելք և հարակից գոտիներ (Արևելյան Սահարա, Սուդան, Հարավային Սուդան, Լիբանան, իսրայելա-պաղեստինյան սահման և այլն) է գործուղել ավելի քան 1800 զինծառայողի: Նրա օգտին է փոխվում ուժերի հարաբերակցությունը նաև Արևելյան Ասիայում: Հաշվի առնելով Չինաստանի ռազմական ինքնաթիռների, ռազմանավերի, ցամաքային բալիստիկ հրթիռների, տարբեր տեսակի զորքերի թվաքանակը՝ կարելի է արձանագրել, որ խաղաղօվկիանոսյան ավազանի այս շրջանում ԱՄՆ-ի ռազմական գերակայության ժամանակաշրջանը մնացել է անցյալում:

Նշենք նաև, որ չինացի զինվորականները մասնակցում են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հավանությանն արժանացած գործողություններին: Այսպես՝ Չինաստանի ժողովրդական ազատագրական բանակի ռազմածովային ուժերի նավերն ուղեկցում էին ՄԱԿ-ի նավերը, որոնք Սի-

րիայից ոչնչացման ենթակա քիմիական զենք էին տեղափոխում Կիպրոս: Բացի այդ, Չինաստանը բազմիցս ռազմական ուժեր է տեղակայել՝ Մերձավոր Արևելքից իր քաղաքացիներին տարհանելու նպատակով: Ավելին, 2019 թվականի մայիսին Պենտագոնի հետախուզական վարչության տնօրեն Ռոբերտ Էշլին հայտարարել էր, որ առաջիկա տասնամյակի ընթացքում Չինաստանը, ամենայն հավանականությամբ, առնվազն կկրկնապատկի իր միջուկային զինանոցի պահուստները⁵:

Հատկանշական է, որ Չինաստանի և ԱՄՆ-ի պաշտպանական բյուջեների միջև առկա տարբերությունը նույնպես աստիճանաբար կրճատվում է: 2019 թվականին Չինաստանի պաշտպանական բյուջեն հասել էր 1,2 տրիլիոն յուանի (175 մլրդ ԱՄՆ դոլար), ինչը ռազմական ծախսերի ծավալով ՉԺՀ-ին դարձնում է ԱՄՆ-ից հետո աշխարհում երկրորդ պետությունը: Ավելին, Խաղաղության խնդիրների հետազոտությունների Ստոկհոլմի ինստիտուտի (SIPRI) գնահատմամբ՝ 2019-ին ՉԺՀ իրական ռազմական ծախսերը կազմել են 1,66 տրիլիոն յուան (240 մլրդ ԱՄՆ դոլար)⁶:

Կարևոր է այս համատեքստում նշել նաև հետզհետե խորացող ռուս-չինական փոխգործակցության մասին, որն ընդգրկում է տարբեր ոլորտներ: Մասնավորապես՝ 2019 թ. հունիսի 5-ին ՌԴ և ՉԺՀ նախագահները ստորագրեցին համատեղ հայտարարություն առ այն, որ երկու պետության միջև համապարփակ գործընկերությունն ու ռազմավարական փոխգործակցությունը մուտք են գործում նոր դարաշրջան:

Միանգամայն բնական է, որ նկարագրված գործընթացները և դրանց միտումները անհանգստացնում են ամերիկյան վերնախավին: Ներկայում Չինաստանին զսպելու և սեփական ազդեցությունը պահպանելու անհրաժեշտության հարցով, ըստ

⁴ Lee, Hsien Long. (2020). The Endangered Asian Century: America, China, and the Perils of Confrontations. *Foreign Affairs*, July/August 2020. Retrieved: December 28, 2020. <https://www.foreignaffairs.com/articles/asia/2020-06-04/lee-hsien-loong-endangered-asian-century>

⁵ Ed Adamczyk. China will double its nuclear warheads in next 10 years, DIA chief says. *Defense News*. May 31, 2019, Retrieved: January 24, 2021. <https://www.upi.com/Defense-News/2019/05/31/China-will-double-its-nuclear-warheads-in-next-10-years-DIA-chief-says/1621559319133/>

⁶ Nan Tian, Fei Su (2021). A New Estimate Of China's Military Expenditure, *Stockholm International Peace Research Institute (SIPRI)*, https://www.sipri.org/sites/default/files/2021-01/2101_sipri_report_a_new_estimate_of_chinas_military_expenditure.pdf

էության, կոնսենսուս (միակամություն) է ձևավորվել թե՛ ամերիկյան հանրապետականների ու դեմոկրատների վերնախավում, թե՛ գործարար ու ակադեմիական հանրություն: Ինչպես «*Foreign Affairs*» պարբերականում հրապարակած իրենց հոդվածում դիպուկ կերպով ձևակերպել են էլբրիջ Բուրդեն և Ռոբերտ Կապլանը, միայն չինական տնտեսության ծավալը, ինչպես նաև դրա տարածքն ու հնարավոր հզորությունը խոր մտահոգություններ են առաջացնում ԱՄՆ-ում, նույնիսկ եթե ՉԺՀ-ում լինեն ժողովրդավարություն⁷: Նման պայմաններում պատահական չէ, որ 2016 թվականին ԱՄՆ-ը առևտրային պատերազմ նախաձեռնեց Չինաստանի դեմ, միաժամանակ, խոսվում է նաև զրսպման ռազմավարության նորացված տարբերակի մշակման մասին: Սակայն, կարևոր է արձանագրել, որ Չինաստանը դեռ ամբողջովին չի իրացրել իր ներքին շուկայի զարգացման ներուժը: Ուստի կարելի է ենթադրել, որ նույնիսկ եթե արտերկրի մաքսատուրքերը պահպանվեն բարձր նիշի վրա, հնարավոր է՝ ամերիկյան կողմի ակնկալիքներն ամբողջովին չարդարանան, քանի որ չինական ներքին շուկան դեռ բավական երկար ժամանակ կարող է սնուցել ՉԺՀ տնտեսական զարգացումը:

Առաջատար ուղեղային կենտրոններից մեկի՝ Ամերիկյան ձեռնարկատիրության ինստիտուտի փորձագետների կարծիքով՝ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մշակման համար պատասխանատու շրջանակներում տարածում է գտնում այն տեսակետը, որ երկու երկրները որոշել են մասնակցել, այսպես կոչված, «գերտերությունների մարաթոնին», որը կարող է ձգվել մի ամբողջ հարյուրամյակ: Սակայն, մրցավազքի ամենասուր շրջափուլը սպրինտերյան սրարշափն է, որին մենք, կարծես, ականատես կլինենք առաջիկա տասնամյակում: Առաջնորդության համար մղվող չին-ամերիկյան պայքարն արագ ավարտ չի խոստանում: Մինչդեռ պատ-

մությունն ու Չինաստանի զարգացման հետագիծը վկայում են այն մասին, որ վտանգի բարձրագույն կետից մեզ ընդամենը տարիներ են բաժանում⁸:

Այս տեսանկյունից, ուշագրավ է նաև բրիտանական «*Reuters*» գործակալության վերլուծաբան Ջոն Քեմփի դիտարկումը: Նրա կարծիքով՝ ապագա պատմաբանները, հավանաբար, կկենտրոնանան 2020 թվականի վրա՝ որպես մի կետի, երբ Միացյալ Նահանգների և Չինաստանի միջև ռազմավարական մրցակցության սասուկացումը վերածվեց նոր «սառը պատերազմի»: Գերտերությունները ձևավորել են բողոքների աճող ցուցակ՝ գրեթե չունենալով ընդհանուր շահեր: Նրանք երկուսն էլ փորձում են երրորդ երկրներին ներքաշել դաշինքի համակարգ, որի միջոցով աշխարհը կբաժանվի երկու մասի: Կարմիրը՝ կապույտի դեմ, մեզ հետ կամ մեր դեմ: Անվերջ աճակատում: Հիմնականում, սա է «սառը պատերազմի» սահմանումը: Սակայն, չկա որևէ կասկած այն առումով, որ երկու երկրներն էլ ավելի ու ավելի լավ են տեսնում և նկարագրում հակամարտությունը՝ գոյաբանական տեսանկյունից: Ջոն Քեմփի խոսքով՝ եթե դա նման է «սառը պատերազմի» և հնչում է որպես «սառը պատերազմ», հավանաբար, դա հենց «սառը պատերազմ» է: Նրա կարծիքով՝ ինչպես և ԱՄՆ-ԽՍՀՄ «սառը պատերազմի» դեպքում, ԱՄՆ-ի և Չինաստանի միջև պատերազմը կարող է ներգրավել ԱՄՆ-ի մի քանի վարչակազմ և Չինաստանի առաջնորդների մի քանի սերունդ՝ ընդ որում, առավել ինտենսիվ դիմակայության փուլերը փոխարինելով լարվածության թուլացմամբ: Միաժամանակ, բացի տնտեսական հակամարտությունից, գոյություն ունի հնարավոր թեժ կետերի ցանկ՝ ներառյալ Թայվանն ու Հարավկորեական ծովը, որ կարող է առաջացնել իրական մարտական գործողություններ: Չկա որևէ երաշխիք, որ ԱՄՆ-ի և Չինաստանի միջև «սառը պատերազմը» կընթա-

⁷ Elbridge Colby, Robert D. Kaplan. The Ideology Delusion: America's Competition With China Is Not About Doctrine. *Foreign Affairs*, September 4, 2020, Retrieved: February 1, 2021. <https://www.foreignaffairs.com/articles/united-states/2020-09-04/ideology-delusion>

⁸ Michael Beckley, Hal Brands. Competition With China Could Be Short and Sharp: The Risk of War Is Greatest in the Next Decade. *Foreign Affairs*, December 17, 2020, Retrieved: December 27, 2020. <https://www.foreignaffairs.com/articles/united-states/2020-12-17/competition-china-could-be-short-and-sharp>

նա նույն եղանակով կամ կավարտվի նույն կերպ, ինչպես եղավ ԽՍՀՄ-ի դեպքում⁹:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ նշված գերտերությունների դիմակայությունը մըտնում է բարդկանխատեսելի ու վտանգավոր շրջափուլ, և ամենայն հավանականությամբ, առաջիկա տարիներին, այս առումով, ակնատես կլինենք նոր դրսևորումների: 2021 թվականի հունվարի 25-ին Դավոսի համաժողովի իր ուղերձում այս մեծ պառակտման մասին էր ասեցանգում նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեսը: Նրա խոսքով՝ աշխարհը բաժանվում է երկու մասի, ընդ որում, մոլորակի երկու խոշորագույն տնտեսություններն առաջնորդելու են երկու ոլորտում՝ ըստ տարբեր գերիշխող արժույթների, առևտրային և ֆինանսական տարբեր կանոնների, յուրաքանչյուրն իր սեփական համացանցով, ինչպես նաև սեփական մարտական ռազմավարությամբ ու աշխարհաքաղաքական գրոյական արդյունքով խաղով¹⁰:

Չինաստանի ապագան՝ RAND-ի աչքերով

Կարծում ենք՝ հետաքրքրական կարող են լինել նաև ամերիկյան փորձագիտական շրջանակների՝ ՉԺՀ ապագայի վերաբերյալ պատկերացումներն ու կանխատեսումները:

Այս առումով, առավել հատկանշական է Պենտագոնի հետ սերտ կապեր ունեցող ամերիկյան հանրահայտ ՌԷՆԴ կորպորացիայի փորձագետների կողմից 2020 թվականին հրապարակված՝ «Չինաստանի մեծ ռազմավարությունը» վերտառությամբ մոտ 154 էջանոց զեկույցը: Նշենք, որ ՌԷՆԴ-ը համարվում է աշխարհի խոշորագույն ուղեղային կենտրոնը և լավագույնը՝ պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով միջգիտակարգային հետազոտությունների ոլորտում: Նշված հետազոտության միջոցով ՌԷՆԴ-ի փորձագետները փորձել են պարզել, թե ինչի կարող է հանգեցնել ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի

միջև լայնածավալ մրցակցությունը: Հեղինակները որոշակիացրել և նկարագրել են Չինաստանի ընդհանուր ռազմավարությունը, վերլուծել վերջինիս ազգային ռազմավարության բաղադրիչները (դիվանագիտություն, տնտեսություն, գիտություն և տեխնոլոգիաներ, ռազմական ոլորտ) և գնահատել՝ որքանով հաջողված կլինի Չինաստանի կողմից վարվող քաղաքականությունն առաջիկա երեք տասնամյակի ընթացքում: Հայտնի է, որ Չինաստանի գլխավոր նպատակն է մինչև 2050 թվականը ստեղծել լավ կառավարվող, սոցիալապես կայուն, տնտեսապես բարգավաճող, տեխնոլոգիապես զարգացած և ռազմական առումով՝ հզոր երկիր: Ինչպես նշված է զեկույցում, Չինաստանը նախանշել է տնտեսական աճի, տնտեսության և անվտանգության ճարտարապետության զարգացման գործում տարածաշրջանային և գլոբալ առաջնորդության, ինչպես նաև իր շահերի տիրույթում գտնվող տարածքների նկատմամբ հսկողության որոշակի նպատակներ: Հեղինակների խոսքով՝ որոշ դեպքերում նշված նպատակները հանգեցնում են ԱՄՆ-ի և մյուս դաշնակիցների հետ Չինաստանի մրցակցությանը, ճգնաժամի, ինչպես նաև հնարավոր հակամարտության: Նրանց համոզմամբ՝ ԱՄՆ-ի հետ հարաբերություններում Չինաստանը ձգտում է կառավարել հարաբերությունները, ստանալ մրցակցային առավելություն՝ չվնասելով այլ ռազմավարական նպատակների իրագործմանը (հատկապես՝ տնտեսական ոլորտում): Չինաստանի հաղթանակին կամ վերելքին նախապատրաստվելն առավել նպատակահարմար է ԱՄՆ-ի համար, քանի որ այս սցենարները համապատասխանում են ազգային զարգացման ընթացիկ միտումներին և ներկայացնում ամերիկյան զինված ուժերի ապագայի վերաբերյալ առավել բարդ սցենարներ: Միաժամանակ, ըստ զեկույցի հեղինակների, ԱՄՆ-ի զինված ուժերը պետք է կանխատեսեն բարձր ռիսկ արդեն իսկ սպառնալիքի տակ գտնվող՝

⁹ Kemp, John. (2020). United States and China enter a new cold war. *Reuters*, (July 22,2020), Retrieved: December 25, 2020. <https://www.reuters.com/article/global-politics-kemp/column-united-states-and-china-enter-a-new-cold-war-kemp-idINL5N2ET2W2>

¹⁰ Secretary-General's special address at Davos Agenda [as delivered]. 25 January, 2021, Retrieved: 25 January, 2021. <https://www.un.org/sg/en/content/sg/statement/2021-01-25/secretary-generals-special-address-davos-agenda-delivered>

Ճապոնիայում, Հարավային Կորեայում և Ֆիլիպիններում տեղակայված առաջնագծի ռազմաբազաների, ինչպես նաև օդում, ծովում և Խաղաղ օվկիանոսի արևմտյան հատվածում կանոնավոր գործելու հնարավորության կորստի համար¹¹:

Հետազոտության արդյունքում զեկույցի հեղինակները մշակել են 2050 թվականի զարգացումների չորս սցենար՝ «հաղթական Չինաստան», «գերակայող Չինաստան», «լճացած Չինաստան» և «փլուզվող Չինաստան» պայմանական անվանումներով:

Ըստ ՌԷՆԴ-ի փորձագետների՝ իրականացման ամենաքիչ հավանականություն ունի «հաղթական Չինաստան» սցենարը, քանի որ դա ենթադրում է սխալվելու նվազագույն հնարավորություն և որևիցե լուրջ ճգնաժամի կամ անհաջողության բացակայություն մինչև 2050 թվականը: Զեկույցում առկա է վերապահություն նաև «փլուզվող Չինաստան» սցենարի նկատմամբ, քանի որ մինչ այժմ ԶԺՀ առաջնորդներն ապացուցել են կազմակերպման և պլանավորման, ինչպես նաև ճգնաժամերի հաղթահարման և փոփոխվող պայմաններին հմտորեն հարմարվելու իրենց կարողությունները: Զեկույցի հեղինակները կարծում են, որ մինչև 2050 թվականը ԶԺՀ-ն կարձանագրի ինչպես հաջողություններ, այնպես էլ անհաջողություններ, ուստի առավել հավանական են համարում «գերակայող Չինաստան» կամ «լճացած Չինաստան» սցենարը: «Գերակայող Չինաստանի» իրագործման պարագայում ԶԺՀ-ն առավելապես կհաջողի իր երկրաժամկետ նպատակների մեջ, մինչդեռ «լճացած Չինաստանի» դեպքում՝ կբախվի լուրջ խնդիրների և չի կարողանա լիովին իրականացնել իր գլխավոր ռազմավարությունը:

Գնահատելով ՌԷՆԴ-ի փորձագետների մեծածավալ աշխատանքը, այնուամենայնիվ, նշենք, որ ապագայի կանխատեսումները, այն էլ՝ այսպիսի երկրաժամկետ կտրվածքով, հաճախ շեղվում են նախնական սցենարներից: Հնարավոր չէ

բացատրել անկանխատեսելի գործոնների դերը, որոնք ի գորու են էականորեն փոփոխելու զարգացումների հնարավոր ուղղությունները: Մյուս կողմից, դժվար է թերագնահատել ապագայի տարբեր սցենարների մշակման նշանակությունն ու կարևորությունը: Այս առումով, հարկ ենք համարում մեջբերել մեր աշխատություններից մեկում ձևակերպված հետևյալ միտքը. կանխատեսելով զարգացումների հնարավոր սցենարներ, պատրաստ լինելով դրանց հետևանքներին և ուղղորդելով գործընթացները մեզ համար առավել ընդունելի հունով՝ մենք ոչ միայն բարձրացնում ենք ընդունվող քաղաքական որոշումների արդյունավետության մակարդակը, ձևավորում ռազմավարական տեսլական և նվազեցնում հնարավոր ռիսկերը, այլև փոխում, ձևավորում, ծրագրում և կերտում ենք մեզ համար առավել ցանկալի ապագա¹²:

Ամփոփում

Հին Հունաստանի ճանաչված պատմիչներից մեկը՝ Ֆուկիդիդը, նկարագրել է մոտ երկուսուկես հազարամյակ առաջ երկու հզոր պոլիսների խոշոր խմբավորումների՝ Աթենական առաջին ծովային (Աթենքի գլխավորությամբ) և Պելոպոնեսյան (Սպարտայի գլխավորությամբ) միությունների միջև բռնկված երկարամյա հյուժիչ ընդհարումը, որը հայտնի է «Պելոպոնեսյան պատերազմ» անվանումով: Ֆուկիդիդը հակամարտության առաջացման պատճառ է համարել վերելք ապրող Աթենքի նկատմամբ Սպարտայի մտավախությունը: Արդեն XXI դարում ամերիկացի հայտնի քաղաքագետ Գրեհեմ Ալիսոնը պատերազմի սանձազերծման նման պատճառը նկարագրելու համար ներմուծել է «Ֆուկիդիդի ծուղակ» եզրույթը, որի միջոցով փաստացի նկարագրվում է մի իրավիճակ, երբ մրցակցող պետություններից մեկը հետևողականորեն մեծացնում է իր հզորությունը, ինչը մյուսի համար, միջազգային ասպարեզում սեփական քաղաքական կշռի և ազդեցության նվազման առումով,

¹¹ Scobell, Andrew, et al. (2020). *China's Grand Strategy: Trends, Trajectories, and Long-Term Competition*. RAND Corporation, Retrieved: 29 January, 2021. DOI: <https://doi.org/10.7249/RR2798>

¹² Աթոյան Վ. (2019), *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցներ*, Եր., «Զանգակ» հրատ., էջ 26:

մտավախություն է առաջացնում և դրդում նախահարձակ գործողությունների՝ չեզոքացնելու իր շահը վտանգող միտումները: Գաղտնիք չէ, որ համաշխարհային պատմության ընթացքում նման իրավիճակներն առավել հաճախ հանգեցրել են պատերազմների:

Ակնհայտ է, որ Չինաստանի ու ԱՄՆ-ի միջև ընթացող դիմակայությունը բազմաթիվ հատկանիշներով նման է վերը նկարագրված իրավիճակին: Թեև չի կարելի բացառել զարգացումների որևիցե սցենար և աներկբայորեն պատասխանել այն հարցին, թե կհաջողվի արդյո՞ք Չինաստանին և ԱՄՆ-ին հայտնվել բացառությունների շարքում և խուսափել «Ֆուկիդիդի ծուղակից»: Միաժամանակ, հաշվի առնելով երկու գերտերությունների առեղծվածային ռազմական ներուժը, բանակի տեխնոլոգիական հագեցվածությունը և, հատկապես, կողմերի զինանոցներում զանգվածային ոչնչացման զենքի առկայությունը՝ բացահայտ ռազմական առճակատում ու լայնածավալ պատերազմը չի կարելի համարել իրավիճակի հանգուցալուծման ամենահավանական սցենար: Նման պատերազմում ոչ միայն հաղթողներ չեն լինի, այլև սպառնալիքի տակ կհայտնվի ընդհանրապես մարդկային քաղաքակրթության գոյությունը: Այնուամենայնիվ, գլոբալ գերակայության համար մղվող պայքարում փոխզիջումը, որպես կանոն, կայունությամբ աչքի չի ընկնում, ուստի այս հարցում նույնպես չի կարելի անտեսել «սև կարապի» տեսությունը կամ բացառել այլ խնդրահարույց գործընթացների (օրինակ՝ Թայ-

վանի հիմնախնդրի շուրջ սրացման) հավանականությունը, ինչը կարող է հանգեցնել անկանխատեսելի զարգացումների:

Ամփոփելով հարկ է արձանագրել՝ աշխարհը թեև աստիճանաբար, սակայն հաստատուն կերպով առավել բազմաբևեռ է դառնում, և համաշխարհային ազդեցության բազմաթիվ կենտրոնների առկայությունը մեծապես բարդացնում է միակամ որոշումների ընդունման գործընթացը՝ չնպաստելով կայունության հաստատմանն աշխարհում: Ակնհայտ է՝ երկու գերտերության շահերի բախումից կարող են օգտվել տարածաշրջանային տարբեր տերություններ՝ փորձելով միջազգային հարցերում ընդլայնել սեփական դերակատարությունն ու ազդեցությունը: Միջազգային ինստիտուտների ճգնաժամի և զսպող կառուցակարգերի անարդյունավետության պայմաններում որքան խոր, որքան երկար և որքան հյուժիչ լինի չին-ամերիկյան դիմակայությունը, այդքան ավելի շատ հնարավորություններ կստանան որոշ ագրեսիվ տերություններ՝ ռազմական կամ տնտեսական գործիքակազմով բավարարելու սեփական հավակնություններն առավել խոցելի երկրների հաշվին: Հետևաբար՝ անժխտելի է, որ վերափոխվող աշխարհակարգն ընկղմվում է բազմաթիվ անորոշություններով և վտանգներով լի հերթական փոթորկոտ շրջափուլ, որն ի զորու է աշխարհի քաղաքական քարտեզի վրա ստեղծելու անկայունության նոր օջախներ՝ մեծապես սպառնալով միջազգային անվտանգությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթոյան Վ. (2019), *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները*, Եր., «Զանգակ» հրատ., էջ 26:
2. Ван, Ивэй. (2020). Выход из кризиса и преимущества Китая. *Россия в глобальной политике*, N 3 (Май/Июнь), дата обращения: 22/01/2021, <https://globalaffairs.ru/articles/vygod-iz-krizisa-i-preimushhestva-kitaya/>
3. Си, Цзиньпин. (2014). *О государственном управлении*. Изд-во литературы на иностранных языках, Пекин, с. 49.
4. Ed Adamczyk. China will double its nuclear warheads in next 10 years, DIA chief says. *Defense News*. May 31, 2019, Retrieved: January 24, 2021. <https://www.upi.com/Defense-News/2019/05/31/China-will-double-its-nuclear-warheads-in-next-10-years-DIA-chief-says/1621559319133/>
5. Elbridge Colby, Robert D. Kaplan. The Ideology Delusion: America's Competition With China Is Not About Doctrine. *Foreign Affairs*, September 4, 2020, Retrieved: February 1,

2021. <https://www.foreignaffairs.com/articles/United-states/2020-09-04/ideology-delusion>
6. Kemp, John. (2020). United States and China enter a new cold war. *Reuters*, (July 22, 2020), Retrieved: December 25, 2020. <https://www.reuters.com/article/global-politics-kemp/column-united-states-and-china-enter-a-new-cold-war-kemp-idINL5N2ET2W2>
 7. Lee, Hsien Long. (2020). The Endangered Asian Century: America, China, and the Perils of Confrontations. *Foreign Affairs*, July/August 2020. Retrieved: December 28, 2020. <https://www.foreignaffairs.com/articles/asia/2020-06-04/lee-hsien-loong-endangered-asian-century>
 8. Michael Beckley, Hal Brands. Competition With China Could Be Short and Sharp: The Risk of War Is Greatest in the Next Decade. *Foreign Affairs*, December 17, 2020, Retrieved: December 27, 2020. <https://www.foreignaffairs.com/articles/United-states/2020-12-17/competition-china-could-be-short-and-sharp>
 9. Nan Tian, Fei Su (2021). A New Estimate Of China's Military Expenditure, *Stockholm International Peace Research Institute (SIPRI)*, https://www.sipri.org/sites/default/files/2021-01/2101_sipri_report_a_new_estimate_of_chinas_military_expenditure.pdf
 10. Secretary-General's special address at Davos Agenda [as delivered]. 25 January, 2021, Retrieved: 25 January, 2021. <https://www.un.org/sg/en/content/sg/statement/2021-01-25/secretary-generals-special-address-davos-agenda-delivered>
 11. Scobell, Andrew, et al. (2020). *China's Grand Strategy: Trends, Trajectories, and Long-Term Competition*. RAND Corporation, Retrieved: 29 January, 2021. DOI: <https://doi.org/10.7249/RR2798>
 12. World Bank. 2021. *Global Economic Prospects, January 2021*. Washington, DC: World Bank, P. 20. doi: 10.1596/978-1-4648-1612-3

Вардан АТОЯН

*Заместитель директора-старший эксперт
исследовательского центра «Амберд», АГЭУ,
доктор политических наук, доцент*

ГЕОПОЛИТИЧЕСКАЯ ХРОНИКА

МОГУТ ЛИ КИТАЙ И США ИЗБЕЖАТЬ «ЛОВУШКИ ФУКИДИДА»?

Статья посвящена анализу тревожных тенденций в китайско-американских отношениях. Рассмотрены изменения геополитических реалий последних десятилетий и в этом контексте изменения глобальной роли Китая. Представлены долгосрочные стратегические цели руководства Китая и прогноз американских экспертов о возможности их реализации. В статье также обсуждаются причины и возможные последствия растущей конкуренции и противостояния между двумя сверхдержавами. В результате проведенного анализа обозначены возможные направления будущих геополитических изменений и развития, угрожающие международной безопасности.

Ключевые слова: *Китай, США, Pax Americana, Pax Sinica, миропорядок, геополитика, сверхдержава, холодная война, противостояние, международная безопасность*

Vardan ATOYAN

*Deputy Director & Senior Expert of "Amberd" Research Center, ASUE,
Doctor of Sciences (Political Science),
Associate Professor of Political Science*

GEOPOLITICAL CHRONICLE

CAN CHINA AND THE UNITED STATES AVOID A "THUCYDIDES TRAP"?

The paper analyzes the alarming trends in Sino-American relations. Changes in geopolitical realities in recent decades and, in this context, changes of the global role of China are considered. The long-term strategic goals of the Chinese leadership and the forecast of American experts on the possibility of their implementation are presented. The research also discusses the reasons and possible consequences of the growing competition and confrontation between the two superpowers. As a result of the analysis, possible directions of future geopolitical changes and developments that threaten international security are identified.

Keywords: *China, the USA, Pax Americana, Pax Sinica, world order, geopolitics, superpower, cold war, confrontation, international security*